Քանի րոպէից յետոյ մի ներքինի, ձեռքիցը բռնած, ներս բերեց մի տասն տարեկան բաւական տկար, բայց շատ սիրուն տղայ, որը ոտքից ցգլուխ հագած ունէր մուգ-վարդագոյն օսմանեան զգեստ, գեղեցիկ նկարներով նախշած եւ ոսկի թելերով ասեղնագործած: Երեխան պարբերական ջերմ ու տենդ ունէր: Ասլանը քննեց նրան, մի քանի առողջապահական պատուերներ տուեց եւ խոստացաւ դեղեր ուղարկել:

Այդ ամբողջ խօսակցութեան ժամանակ, որ տեւեց բաւական երկար, Ասլանը երեւաց ինձ իր աշխարհագիտական խորին տաղանդով: Նա փաշային աւելի խօսել էր տալիս, քան թէ ինքը խօսում էր: Իր վարողութեան մէջ մինչեւ այն աստիճան հրապուրիչ էր, որ ինձ թւում էր, թէ փաշան բոլորովին սիրահարուեցաւ նրա վրայ: Եւ իրաւ, նա յայտնեց, թէ իրան շատ բախտաւոր կը համարէր, եթէ բժշկապետին միշտ իր մօտ տեսնէր, թէ իր տան մէջ նա ամէն յարմարութիւններ կը գտնէր, եթէ բարեհաճէր, քանի որ այդ քաղաքումն էր, իր մօտ բնակուել: Ասլանը շնորհակալութեամբ հրաժարուեցաւ, յայտնելով, թէ դժբախտաբար չէ կարող վայելել նորին վսեմութեան շնորհը, որ իր համար միշտ անմոռանալի կը մնայ, ըստ որում, մի քանի օր միայն դիտաւորութիւն ունի մնալ այդ քաղաքում եւ խոստացաւ՝ մինչեւ իր դուրս գալը քաղաքից, միշտ այցելել փաշայի մօտ, եւ թէ նրա որդուն, թէ իր տկարութիւններին դարման անել:

— Ինչո՞ւ էք այդքան շտապում, պարոն բժշկապետ, — հարցրեց փաշան:

— Ինձ հարկաւոր է մի երկու ամսից յետոյ անպատճառ Հնդկաստանում լինել: Ժամանակ կորցնել չեմ կարող: Ես այս քաղաքով անցայ միայն այն նպատակով, որ տեսնեմ մի քանի հնութիւններ: Այստեղից ուղղակի Մուսուլ գնալու դիտաւորութիւն ունեմ. ինձ այնտեղ հետաքրքրում են հին Նինոէի աւերակները: Այնտեղից Բաղդադ պէտք է անցնեմ, Բաբելոնը տեսնելու համար: Յետոյ նաւով կուղեւորուեմ դէպի Հնդկաստան:

— Մեր քաղաքում բաւական հնութիւններ կան, որոնք դեռ հետազօտուած չեն, — ասաց փաշան: — Շատ լաւ էք մտածել, որ ձեր ճանապարհորդութեան մէջ մեր քաղաքը զանցառութեան չէք տուել:

— Ինձ աւելի հետաքրքրում են սեպաձեւ արձանագրութիւնները, որոնցով, կարծեմ, շատ հարուստ է Վանը:

— Այո՛, այո՛, հարուստ է: Ես կը տամ ձեզ մի առաջնորդ, որը ձեզ ամէն տեղ ման կածէ եւ ամէն ինչ ցոյց կը տայ, կտանէ եւ միջնաբերդը, որտեղ շատ կը գտնէք յիշեալ արձանագրութիւններից: